

ԳՐԱՊԱՅՔԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ
ՍՏ. ՆԱԶԱՐՅԱՆՑԻ «ՆԱՄԱԿԱՆԻ» - ՈՒՄ

Լ Վ ԹՈՒՄՆԱՅԱՆ

Ստ. Նազարյանցի գործունեության մեջ հայ ազգային լեզվի հարցը գրավում է ուրույն տեղ և մնում կարևորագույն խնդիր, որի շուրջն էլ հենց հյուսվում է նրա լեզվագիտական գործունեությունը: Նա ունեցել է լայն մամակագրություն հայ հասարակական մտքի ներկայացուցիչների և օտարների հետ: Մեզ հասած մամակները բացում են բազմաթիվ հարաբերություններ, որոնք վեր են հանում Նազարյանցի նշանակալից դերը հասարակական հոսանքների բախումների մեջ, հայ ազգային կյանքի վերածնության կենսական պահանջները, գրականության մեջ ժողովրդական կենդանի լեզվի դիրքերի հաստատումը, գրաբարի՝ որպես մեծած լեզվի մերժումը: Ըստ Նազարյանցի՝ այդ մեծած լեզվին պետք է փոխարինի աշխարհաբարը, որն արդեն դարձել էր ազգի խոսակցական լեզուն: Այն պետք է դառնա ազգի գոյությունն ու առաջադիմությունն ապահովելու «լուսավորության կամուրջ»:

Ստ. Նազարյանցը մեծ նշանակություն տալով ժողովրդի կրթության գործում գրական լեզվին, անհրաժեշտ է համարում աշխարհաբար լեզվի մշակման գործն սկսել ժողովրդական դպրոցների հիմնադրումով: 1843 թ. Ներսես Աշտարակեցուն գրած մամակում Նազարյանցը առաջարկում է հիմնել մայրենի լեզվով մի դպրոց Արարատյան աշխարհում և հմուտ մասնագետների միջոցով նախապատրաստել մայրենի կրթությամբ ուսուցիչներ և գիտնականներ՝ ազգային գրականությունը և գիտությունները ծաղկեցնելու համար:

Նույնքան գնահատելի է նաև նույն տարվա՝ 1843 թ. օգոստոսին, Հովհ. Լազարյանցին գրված մամակը, որտեղ Նազարյանցը կոչ է անում Լազարյան ճեմարանը վերափոխել հայկական բարձրագույն ուսումնական հաստատության, հայ երեխաներին կրթել մայրենի լեզվով, նրանց մեջ զարգացնել ազգային ինքնագիտակցության որակները: Ժամանակի հզոր լեզուն արթնացնում է Հայկի որդիներին մտավոր թմրությունից, և Նազարյանցը կոչ է անում նրանց գնալ մարդկության զարգացման ճանապարհով (74): Անհրաժեշտ է ապրել, սովորել, գոյություն ունենալ ժամանակի հետ և նրա համար:

Նազարյանցին հուզող հարցերից մեկը ազգային գրականության ստեղծման անհրաժեշտությունն էր, առանց որի նա չէր պատկերացնում ժողովրդի հետագա զարգացումը և ազգային հոգևոր կյանքի բարգավաճումը:

Նազարյանցը կոչ էր անում հետևել եվրոպական քաղաքակրթված ազգերի օրինակին, որոնք ստեղծեցին հոգևոր մեծ հարստություն՝ որը երիտասարդներին մղեց դեպի ժողովրդական զարգացումը և գիտությունները (75): Լուսավորությամբ են արթնացել և զարգացել եվրոպական ազգերը. հույները, ստրկության դարավոր շղթաները իրենց վրայից դեն մետելով, հարություն են առնում ասես դագաղից, ուրախաբեր ձայներ են հասնում Հեղկաստանից. Նազարյանցը հիշատակում է XIX դ. առաջին տասնամյակներին հնդիկ լուսավորիչ՝ Դրաման Ռոյի և Տվակազմանտ Թագորի մղած պայքարը իրենց ժողովրդի ազգային միավորման և հոգևոր վերածնության համար (75): Այսբանից հետո մի՞թե հայերը պետք է գերադասեն խավարը լուսից, հավիտենապես գերի մնան հետամնացությանը և տգիտությանը: Հարկավոր էր պայքար սկսել սեփական ժողովրդի ազգային կյանքի զարգացման համար և հայ ազգային մշակույթի մեջ սերմանել եվրոպական արվեստների և գիտությունների ոգին. «Հայերի կոչումը ներկայումս այս է. ճանաչել իրենց անցյալը բոլոր նշանակություններով և ընդունելով եվրոպական ոգու զգացումները՝ վերամշակել

¹ Տե՛ս Ստ. Նազարյան, Նամակահի, Եր., 1969, էջ 81: Այսուհետև սույն գրքից հղումները կտրվեն շարադրանքում. փակագծերի մեջ կնշվի էջահամարը:

դրանք ազգային ձևերով և ըստ այդմ ծառայացնել ժողովրդական կրթությանն ու գիտությանը: Հայրենական լեզվի և գրականության խոր ուսումնասիրությունը, հիմնավոր ծանոթությունը ժողովրդի պատմությանն ու հնություններին և եվրոպական գիտություններում մեթոդական կրթությանը՝ ահա այն միջոցները, որոնք տանում են դեպի ցանկալի նպատակը: Լեզուն ժողովրդի լուսավորության ամենագոր օրգանն է. լեզուն, ինչպես և գրականությունը, ամեն ազգի ամենանվիրականն է, նրանում են արտահայտված նրա զգացմունքներն ու մտքերը. նա կարծես ծառայում է որպես կանխագուշակ, որի բոլոր խոսքերը իրենց մեջ պարունակում են հավերժ անբեկանելի իսկություն, որ վերաբերում է ընտրյալ ցեղի տարբեր ճակատագրերին, նրա բնույթին, իմացության կերպին, Աստծուն, բնությանը և մարդկության հայեցողություններին» (75):

Նազարյանցի առաջադրած ազգային ժողովրդական ծրագրի միտումն է փոխել ճեմարանի ուսուցման դրվածքը՝ հիմք ընդունելով ժողովրդի լուսավորական պահանջները:

Նազարյանցի լուսավորական գործունեության բնույթի, քաղաքական հարաբերությունների նկատմամբ ունեցած հայացքների մասին մենք պատկերացում ենք կազմում կազանյան տարիներին Եփր. Ալթունյանին, Ն. Աթովյանին, Պոպովյանին, Հ. Ծահխաթունյանին և ուրիշներին հասցեագրված նամակներից: Այս տարիներին Նազարյանցը հանդես է գալիս լուսավորական շարժման ընդարձակ ծրագրով, պայքար է սկսում հետադիմական ուժերի դեմ, բազմաթիվ հարցեր է շոշափում ժողովրդին խավարի ճիւղերից հանելու և նոր քաղաքակրթությանը մոտեցնելու համար:

1847 թ. նոյեմբերի 29-ին Աստրախանի հայ վաճառական Պոպովյանին ուղղված նամակում Նազարյանցը ձգտում է ժողովրդին հասկանալի լեզվով քարոզել իր հասարակական իդեալները: Նա գտնում է, որ պետք է ճանաչել ազգը. իսկ դրա համար առաջին հերթին պետք է ապավինել լուսավորությանը: Բայց հայոց «սև վարդապետները» ուսման և իմաստության հալածողներ են և ազգին կանգնեցրել են անդունդի եզրին. «Կրկին անգամ ասեմ՝ լույսը և խավարը միմյանց թշնամի են. ուրեմն պատճառ չկա, որ լուսավոր մտքեր խավար մտքերին մոտենան. պատճառ՝ որ խավարամիտ մարդերը շատ անգամ ձեռքերին կարողություն ունենալով լուսավոր մտքերը կսպանեն և կոչնչացնեն: Ասացի ձեզ՝ մեր ճար ու դեղը ազգի լուսավորյալ որդիներն են, և ոչ մեր հոտած, փոսած, ապականյալ սևավեղարները» (112): Նա պահանջում է ազատվել եկեղեցու գերիշխանությունից և գրաբարից, որը ժողովրդին անհասկանալի է ու խորթ:

Հաջորդ հարցը, որը մտահոգում էր Նազարյանցին, գրական լեզվի մշակման անհրաժեշտությունն էր: Լեզուն պիտի կենդանանա ժամանակի պահանջների համաձայն: Աթովյանի նման Նազարյանն էլ կարծում էր, որ երեխաներին պետք է լույսով փարատել, ոչ թե խավարով. «Ի՞նչ կլիներ, որ մեր հայերի երեխաները յուրյանց լեզվով կարողանային զանազան ուսումներ ստանալ ինչպես գերմանացիոց, գաղիացիոց և ռուսաց երեխաները, լեզու իբրև լեզու իմանալ ջոկ բան է, քան թե մի ուսումն, մի գիտություն օտար լեզվով սովորելու. բայց հայերի երեխաները չարչարանաց համար են ծնած, որովհետև հայոց ծնողները և առհասարակ ազգը ոչինչ չհասկանալով, ոչինչ պատրաստություն արած չէ ուսումը հեշտացնելու համար: ...Ինչքան որ հայի երեխայքը յուրյանց գրոց լեզուն ուսանում են, շատ մեռած և անպտուղ բան է. էն լեզուն, որ ուսման ճանապարհ չէ, էն լեզուն որով ոչ մտածել և ոչ խոսել կարող է երեխան, էն լեզուն ինչպես լուսավորության պատճառ լինի»,- գրում է նա 1850 թ. Գրիգոր Սուլթանյանին ուղղված նամակում (132):

Լազարյան ճեմարանում գտնվելու առաջին իսկ օրերից Նազարյանցը հակադրվում է գրաբարականների, հատկապես Մկրտիչ Էմինի՝ աշխարհաբար լեզվի վերաբերյալ ունեցած կարծիքին: Վերջինս չէր հարգում Նազարյանցի «ծայրահեղ հայացքները» և չէր ընդունում աշխարհաբարը իբրև գրական լեզու:

1845 թ. Մ. Էմինը հրապարակել էր «Ընտիր հատուածք ի պէտս աշակերտաց Լազարեան ճեմարանի արևելեան լեզուաց» վերնագրով դասագիրքը: Մի ձեռնարկ, որը պետք է ծառայեր աշակերտներին ավելի հեշտ գրաբար ուսուցանելու և հին մատենագրությանը ծանոթանալու նպատակին:

1850 թ. հոկտեմբերի 17-ին գրած նամակում, որն ուղղված է Եփրեմ վարդապետ Ալթունյանին, Նազարյանցը դժգոհում է Էմինից: Կառչել գրաբարից, ասում է նա, նշանակում է հնարավորություն չտալ ժողովրդի հոգևոր ուժերի զարգացմանը, նեխած վերքերը բուժե-

լու փոխարեն հիվանդացնել մարմինը և դատապարտել մահվան. «... Բայց չէ և չէ պարտ երբեք ի մտացօճս լինել, թե վիրաբույժ բանագետ հատույ սուր ի ձեռին կամ կարմրացուցեալ երկաթ յաջն՝ ոչ զվորուստ ախտացելոյն դիտել. քաւ և մի լիցի, այդ, մին հատանէ, իսկ միւսն խարէ, բայց ողջամիտ խորհրդով և զհիվանդագին փրկութիւնն նկատելով: Վասն նեխեալ վիրաց մերոց պետք էին սրոյ և հրաշէկ երկաթոյ առ ի բաց հատանել և ի բաց խարել զապականեալս յանդամոց, զի մի բոլոր մարմինն անպիտանացեալ կորիցէ» (139):

Այս տարիներին Նազարյանը նշանակալից դեր է կատարում աշխարհաբար լեզվի իրավունքների նվաճման գործում. լույս են տեսնում նրա «Յաղագս փորձական հոգեբանութեան ճառ» (1851 թ.), «Վարդապետարան կրոնի» (1853 թ.) գրքերը, «Առաջին հոգեդէն կերակուր հայազգի երեխաների համար» (1853 թ.) ձեռնարկը: 1852 թ. սեպտեմբերի 8-ին Գր. Սուլթանյանին գրած նամակից պարզվում է, որ Նազարյանը այդ շրջանում մտադրվել է տպագրել աշխարհաբար լեզվով մի այբբենարան. «... այնպես տնօրինված, ինչպես եվրոպացոց մեջ, այսինքն՝ տառերի, վանկերի և բառերի, մի խոսքով ընթերցանութեան մեջ և հոգևոր կերակուր և սնունդ ստանար, և ոչ թե չորանար ու ցամաքեր մտքով ու սրտով, ինչպես մինչև այժմ եղել է» (160): Խոսքը վերաբերում է «Առաջին հոգեդէն կերակուր հայազգի երեխաների համար» ձեռնարկին, որը կազմված էր տառուսուցման նոր մեթոդով և իր բովանդակությամբ արձագանքում էր ժամանակակից եվրոպական ուսուցման նոր պահանջներին: Սակայն գիրքը չծառայեց իր նպատակին:

Նազարյանը աշխատում է ավելի բազմաբովանդակ նյութեր պատրաստել հայ ընթերցողի համար: Այդ աշխատասիրության արդյունքն էր «Հանդես նոր հայախօսութեան» երկհատորյակը (1857 թ.): Աշխարհաբարով գրված այս աշխատանքով Նազարյանը ապացուցում էր, որ նոր լեզուն կարող է և պետք է լինի լուսավորության ու կրթության գործիք:

Իր «Հրապարակախոս ձայն» աշխատության մեջ Սմբ. Ծախազիզը «Հանդէս նոր հայախօսութեան» մասին գրում է. «Ինչու՞ զօրօրինակ Նազարյանը մե՞նակ հանձն է ստել գրել մի այդպիսի երկար ու ձիգ շարադրություն և չէ թողել մեզ մանկավարժներինս, պատմաբաններինս, բնագետներինս և առհասարակ մասնագետներինս համարել այդ գործը: Այս հարցին դժվար չէ պատասխանել. որովհետև այդ մասնագետներս չենք կղել այն ժամանակ, չկանք և այժմ: Բայց ազգը լուր զավակներով կարոտ է ընթերցաբարսնի. մի բազմօրինակ ընդհանրախոս ընթերցարանի»¹:

Իհարկե այսպիսի ծավալուն բովանդակությամբ ժողովածու հրապարակելը չէր կարող հեշտ լինել: 1854 թ. վերջերին հասարակական գործիչ Ն. Ծանյանի միջոցով «Հանդէս նոր հայախօսութեան» I հատորը հասնում է Լազարյաններին տպագրության թույլտվություն ստանալու համար: Վերջիններս հայտնում են, որ ընդունելի չեն համարում ոչ գրքի վերնագիրը, ոչ լեզուն և ոչ էլ բովանդակությունը: Նրանք խորհուրդ են տալիս լեզվի հարցում հետևել Մխիթարյաններին: Վերջիններս, կարելի է ասել, դարերի խորքից հանեցին, փոշիներից մաքրեցին, ընթերցողին ներկայացրին հայ դպրությունը և դարձան, ինչպես Նազարյանն է անվանում, «հին հայկական լեզվի քրտնաջան մշակներ» (էջ 200): Բայց որքան էլ Մխիթարյանները հայագիտությանը նվիրված իրենց ջանասեր գործունեությամբ նպաստել և նպաստում էին ազգային մշակույթի զարգացմանը. այնուամենայնիվ չէին կարող շրջել պատմության անփիլը, քանի որ գրական նոր լեզուն մշակվում էր ժողովրդի նոր մտածությանը համեմատ:

Հայերը, գրում է Նազարյանը, պետք է ենթարկվեն զարգացման նույն օրենքներին, ինչպես որ առաջ են գնացել եվրոպական ազգերը, ուստի և չպետք է Մխիթարյաններին օրինակ բերելով հավատացնել, թե մեռած գրաբարը կարող է երբևէ վերակենդանանալ: Սակայն Նազարյանը չի ժխտում գրաբարի դերը որ գրական լեզվի կազմավորման գործում: Նա գտնում է, որ հին լեզվի հարստությունը կարևոր է նոր լեզվի մշակման համար, և պետք է այն, ինչ որ անհրաժեշտ, պակաս է նորին, լրացնել հին լեզվից. «Հայոց հնություններով զբաղմունքերին նվիրված ուսյալ հայը, ժողովրդախոսակցական լեզվով գրող հայը միշտ կդիմեն նվիրական հին հայերենի սրբությանը, առաջինը՝ ժողովրդական հնության հուշարձանների ուսումնասիրության համար, իսկ վերջինը՝ հնագույն խոսքի անսպառ ակունքներից ժողովրդական բառուբանը հարստացնելու և վսեմացնելու համար» (171):

¹ Սմբատ Ծախազիզ, Հրապարակախոս ձայն, Մ., 1881, էջ 80:

Եվրոպական մտքին, ազգերի պատմությանը քաջ ծանոթ այս գործիչը լավ գիտեր, որ գրաբարը այլևս հարություն չի առնի, որքան էլ աշխատեն այն հղկել ու զարդարել: Նամական Նազարյանը նշում է, որ եվրոպական բոլոր ազգերի լեզուներն էլ վերածնունդ են ապրել: Նա բերում է իտալական գրական լեզվի օրինակը, թե ինչպես XIII դարում ընդդեմ մենածային կատակերգությունն ստեղծագործությամբ նոր աստիճանի բարձրացրեց ժողովրդական բարբառը և մշակեց նոր իտալերենը. «Ընդամին ստեղծված է նոր իտալական գրականություն: Հասարակ ժողովրդական լեզուն Դանտեի *Volgare eulogio*, դասական լատիներենի համեմատությամբ, կարծես բարբարոսական լեզու լինի, և նույնիսկ ավելի շատ, քան այն հանրամատչելի լեզուն, որը ես օգտագործում եմ «ժողովրդական օգտին» նվիրված իմ գրավոր աշխատություններում: Սակայն շրջաճախաց, խորամիտ մեծ Դանտեն չքամահրեց այն. նա հասկացավ իր ժամանակի պահանջները, հասկացավ անցյալի վերադարձի անկարելիությունը, թողեց հիճն ու դարձ ապրածը, և ժողովրդի՝ այդ, ըստ երևույթի, «անարգ զանգվածի» շուրթերից հնչող կենարար բառից, նրա հանճարի հզոր ուժի ներքո, ի հայտ եկավ իտալական նոր պոեզիայի հրաշալի երկը՝ «Աստվածային կատակերգությունը» (170):

Անգամ այնպիսի երկրներում, որտեղ վերածնության հարց չկար, լեզվի վերանորոգումը դարձյալ պահանջ էր: Նույնիսկ ֆրանսերեն սքանչելի լեզուն շնորհալի գրողների գրչի տակ բազմաթիվ խեղաթյուրված ու աղավաղված ձևերից պետք է աստիճանաբար դառնար ներկայիս լեզուն ժողովրդական տարրերի օգնությամբ:

Նույնը կարելի էր տեսնել XVIII դ. վերջերին և XIX դ. սկզբներին Ռուսաստանում ընդդեմ եկեղեցա-սլավոնական լեզվի և Ռոգուտ կենդանի ուսերենի (170):

Հասարակ ժողովրդի լեզուն, որը ծառայում է որպես նոր մտքերի և նոր մտածողության միջոց, Նազարյանը հարկ է համարում մաքրել թուրքական-արաբական-պարսկական խառնուրդներից՝ ժամանակակից ձևերով, այսինքն՝ նոր համակարգի քերականական կարգերով և ապա հարստացնել հին լեզվից վերցրած այնպիսի բառերով ու ոճերով, որոնք հասկանալի են ներկա սերնդին. «Ինչ որպես մտքի գործիք ծառայող լեզուն նոր մտածողության, պատկերացման և տակտի ստեղծածն է, որը հիմնված է տարբեր վայրերի հայերի մաքուր խոսք ու գրույցի ունկնդրման վրա: Ես իմ առաջ այսպիսի խնդիր դրեցի. ժամանակակից ձևերի, այսինքն՝ ըստ քերականական կատեգորիայի նոր համակարգի՝ մաքրել լեզուն օտար (թուրքական-պարսկական-արաբական) խառնուրդից, վեհացնել և հարստացնել այն հին հայերենից արված այնպիսի փոխառություններով, որոնք մատչելի են ներկա սերնդին: Ես մեր լեզուն որոշ չափով նաև եվրոպականացնում եմ, հատկապես գիտության ոլորտներում: Ես բնավ վաճառվ կամ էլ Հայկյան գեղեցիկ խոսքի ավերույթ են, ընդհակառակը, ես ձգտում եմ վերականգնել նրա էությունը նոր ձևերում ըստ նոր քերականության համակարգի այնպես, ինչպես որ ի վիճակի է հասկանալ մեր ժողովրդը: Հանրամատչելի լեզվով գրված իմ բոլոր երկերում Դուք չեք հանդիպի ոչ մի օտարացեղ բառ, իմ լեզվի ամբողջ նյութը կազմված է հին Հայկյան հանքի ադամանդներից» (172): Առհասարակ հին լեզուների կարևորությունը ավելի ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել «հնության վաստակը»: 1870 թ. ապրիլի 19-ին Սամսոն Մայսուրյանին գրած նամակում Նազարյանը մատնանշում է հին լեզուների օգտակարության հարցը. «Լատիոնի լեզուն յուր բոլոր մատենագրությամբ նույնպես հարկավոր է Ջեզ և մեզ ամենեցուն, իբրև մի հին լեզու, որոյ վերայ հիմնված է եվրոպական լուսավորության շինվածը, որ մի էական պատմական օղակ է, որով նոր եվրոպական աշխարհը կապակցվում է հին հետ... հին լեզուք առ հասարակ՝ են առաջին նախադասությունքը և հարկավոր նախադասությունքը» (360):

Այսպիսով, Նազարյանը իր նամակներում նոր լեզվի խնդիրը քննել է երկու տեսանկյունով. նախ՝ որպես ազգը լուսավորող կարևոր գործոն, ապա՝ որպես գրական նոր լեզվի ձևավորման հիմք:

Л. В. ТУМАНЯН - *Отголоски борьбы за обновление армянского языка в "Письмах" Ст. Назарянца.* - В статье рассматриваются затронутые в "Письмах" Ст. Назарянца вопросы, касающиеся борьбы за обновление армянского языка, которая развернулась в армянской действительности в 50-70 гг. XIX века. В своих письмах Назарянц вопрос нового языка рассматривает с двух сторон: во-первых, как важный фактор просвещения нации, во-вторых, как основу формирования нового литературного языка.